

## Հայաստանի Հանրապետության հուշադրամները

ՀՀ կենտրոնական բանկը թողարկում է թղթադրամներ, մետաղադրամներ և հուշադրամներ:

Հուշադրամները հիմնականում թանկարժեք մետաղներից (ոսկուց և արծաթից) պատրաստվող դրամներ են, որոնք առանձնանում են պատրաստման բարձր որակով և թողարկվում են ազգային, միջազգային, պատմամշակութային, հոգևոր և այլ արժեքները այս կերպ հավերժացնելու, հասարակությանը ներկայացնելու և դրամագիտական շուկայի պահանջարկը բավարարելու համար:

Թղթադրամների և մետաղադրամների նման հուշադրամները ևս ունեն անվանական արժեք, ուստի Կենտրոնական բանկի կողմից ենթակա են հետգնման անվանական արժեքով: Հուշադրամները, ըստ էության, կարող են օգտագործվել որպես վճարամիջոց, սակայն չեն օգտագործվում որպես այդպիսին, քանի որ հավաքորդական առարկա են և ունեն անվանական արժեքից շատ ավելի բարձր վաճառքի գին: Հուշադրամների վաճառքի գինը ձևավորվում է մի շարք բաղադրիչներից, որոնցից հիմնականները մետաղի արժեքը, արտադրության ծախսերը և ձեռքի աշխատանքի մեծ ծավալն են: Հուշադրամներն ամփոփվում են թափանցիկ ակրիլիկ պատիճներում և ունեն իսկության հավաստագրեր. վաճառվում են ներկայացուցչական տուփերով կամ, առանձին դեպքերում, բուկլետների տեսքով:

1994 թվականից ՀՀ կենտրոնական բանկը թողարկել է շուրջ 150 հուշադրամ, որոնք իրենց թեմատիկայով ընդգրկում են հանրային գործունեության գրեթե բոլոր ոլորտները: Ամեն տարի հուշադրամները ներկայացվում են միջազգային դրամագիտական մրցույթների, իսկ 2011 թվականին երեք հուշադրամներ՝ «Մովսես Խորենացու ծննդյան 1600-ամյակ», «Ջազ» և «Լվաճաղիկ Ջանգեզուրի», արժանացել են մրցանակների և պարգևատրվել դիպլոմներով:

Հուշադրամների վաճառքն իրականացվում է ՀՀ կենտրոնական բանկի «Դրամագետ» վաճառասրահում: Հուշադրամների և դրանց վաճառքի մասին մանրամասն տեղեկություն կարելի է ստանալ այցելելով ՀՀ կենտրոնական բանկի պաշտոնական կայք՝ [www.cba.am](http://www.cba.am):